

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

INTRODUCTION

Սույն ժողովածուն պարունակում է ՀՀ աշխատաշուկայի վերաբերյալ ամփոփ վիճակագրական ցուցանիշների ժամանակագրական շարքեր՝ ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ (նաև՝ ճշգրտված), որոնք կարող են լուսաբանել ոլորտի փոփոխությունները վերջին տարիներին:

Ընդհանուր առմամբ տեղեկատվությունը ներկայացված է ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Երևան քաղաքի, ՀՀ մարզերի, գյուղ-քաղաք կտրվածքով, ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական տարբեր բնութագրերով:

Ժողովածուն հիմնական ցուցանիշների վերաբերյալ ներառում է նաև համառոտ մեթոդաբանական պարզաբանումներ, որոնք հիմնականում համապատասխանում են միջազգային ստանդարտներին:

ՀՀ աշխատաշուկայի զարգացումները ժողովածուում ներկայացված են տարբեր աղբյուրներից ստացված տվյալների հիման վրա. օգտագործվել են ինչպես պետական վիճակագրական և գերատեսչական հաշվետվությունների, այնպես էլ աշխատուժի ընտրանքային հետազոտությունների արդյունքները՝ իրականացված տնային տնտեսություններում և առևտրային կազմակերպություններում:

Տեղեկատվության հիմնական սպառողներն են պետական կառավարման մարմինները, գիտական, հետազոտական, կրթական հաստատությունները, ՀՀ կենտրոնական բանկը, գործարար հանրությունը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները (Աշխատանքի միջազգային կազմակերպություն, Եվրոստատ, Համաշխարհային բանկ, Եվրասիական տնտեսական միություն, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, ՄԱԿ և այլն) և վիճակագրական տեղեկատվության այլ սպառողները:

Ներկայացված տվյալները հիմնականում հաշվարկված են միջին տարեկան կտրվածքով:

This handbook encompasses time series of summarized statistical indicators on the Armenian labour market on a monthly, quarterly and annual basis (also adjusted) describing the changes in this sector during the past years.

In general, the information is presented in both nationwide and broken down by Yerevan city, RA marzes, as well as by urban/rural, various demographic and socio-economic characteristics.

The brief methodological explanations on main indicators are provided in the handbook, which are mainly corresponding to the international standards.

Developments in a labour market of RA presented in the handbook are based on the data received from the different sources. References for the handbook were: results of the state statistical and administrative (departmental) reports, as well as findings from labour force sample surveys carried out in a households and commercial enterprises.

The main data users are authorities of public administration, scientific, research, educational institutions, the Central Bank of RA, business community, mass media, international organizations (International Labour Organization, Eurostat, Eurasian Economic Union, World Bank, OECD, UN, etc.), and other users of statistical information.

Presented data mainly were computed by the average annual basis.

ԱՇԽԱՏՈՒԺԻ ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ THE METHODOLOGY OF THE LABOUR FORCE SURVEY

Աշխատուժի հետազոտության նպատակը

Աշխատուժի հետազոտությունը (ԱՀ) ընտրանքային որոշակի մեթոդով ընտրված տնային տնտեսությունների (SS) վիճակագրական ուսումնասիրություն է, որի շրջանակում տեղեկատվություն է հավաքվում SS-ներում բնակվող բնակչությունից՝ միջազգայնորեն կիրառվող մեթոդաբանությամբ և ընթացակարգով: Միջազգայնորեն ճանաչելի է նաև, որ աշխատուժի հետազոտությունն աշխատանքի շուկայի հիմնական վիճակագրության լավագույն աղբյուրն է:

Հետազոտության նպատակը ոչ միայն հանրությանն առավել հայտնի զբաղվածության և գործազրկության, այլ նաև երկրի աշխատանքի շուկան բնութագրող այլ ստանդարտ ցուցանիշների վերաբերյալ համապարփակ տեղեկատվության ապահովումն է:

Հետազոտության շրջանակը

• **Ընտրանքային հիմնական միավորը մասնավոր** SS-ն է, այսինքն չեն հետազոտվել ծերանոցներում, կալանավայրերում և համանման այլ ինստիտուցիոնալ SS-ներում բնակվողները:

• **Հետազոտվող միավորը 15-75** (ներառյալ) տարեկան անձինք են, ովքեր ա) սովորաբար բնակվում են տվյալ SS-ում, բ) SS-ից բացակայել են **մինչև 3** ամիս ժամանակով (երկրի ներսում կամ երկրից դուրս), գ) գտնվել են պարտադիր ժամկետային զինծառայության մեջ:

• **Դիտարկվող ժամանակաշրջանը** *տարվա* բոլոր ամիսներն են:

• **Հետազոտվող ժամանակահատվածը** հետազոտությանը (հարցմանը) նախորդող վերջին կամ անցած օրացուցային **մեկ շաբաթն** է՝ երկուշաբթիից կիրակի օրը (ներառյալ): Հետազոտությունն իրականացվել է հանրապետության բոլոր մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերում:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը

Հետազոտության հարցաթերթը, կիրառված հասկացությունները, ցուցանիշների համախումբը և հաշվարկման մեթոդաբանությունը, ընտրանքի մեթոդը հիմնականում համապատասխանում են Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) և Եվրամիության վիճակագրական գրասենյակի (Եվրոստատ) կողմից առաջարկվող սահմանումներին ու դրույթներին՝ հնարավորինս հաշվի առնելով Հայաստանում դրանց կիրառման առանձնահատկությունները՝ միաժամանակ ապահովելով համադրելիությունը միջազգային համանման ցուցանիշների հետ:

Հետազոտությամբ ուսումնասիրվող երևույթների մասշտաբների հնարավորինս ընդգրկման նպատակով **աշխատունակ տարիք** սահմանվել է **15-75** (ներառյալ) տարիքային միջակայքը:

Հետազոտության մեթոդաբանության համաձայն.

• յուրաքանչյուր հարցվող ըստ տնտեսական ակտիվության կարգավիճակի դասակարգվել է միմյանց բացառող հետևյալ երեք խմբերի՝ **զբաղված, գործազուրկ, տնտեսապես ոչ ակտիվ**:

• տվյալները բնութագրում են հարցվողների տնտեսական ակտիվության **ընթացիկ** կարգավիճակը՝ հետազոտվող կարճ ժամանակահատվածի (մեկ շաբաթվա) կտրվածքով:

Ընտրանքի համառոտ մեթոդաբանությունը

SS ընտրության համար կատարվել է ըստ մարզերի ստրատիֆիկացված (շերտավորված) երկաստիճան ընտրանք՝ **սիստեմատիկ հավանական ընտրանքի** մեթոդով: Երևանը և մարզերը՝ բոլոր գյուղական և քաղաքային բնակավայրերով, ընտրանքային համակցության մեջ ներառվել են ՀՀ բոլոր SS-ների կազմում այդ ստրատայում առկա SS-ների համամասնությամբ: Հիմք

ընդունելով ՀՀ վարչատարածքային բաժանումը, առաջին քայլով ընտրվել են նախնական ընտրանքային միավորները՝ հաշվային տեղամասերը: Նշված համամասնությունների հաշվարկման համար 2014թ. ԱՀ համար օգտագործվել են 2001թ., իսկ 2015-2017թթ.-ին՝ 2011թ. ՀՀ մարդահամարի արդյունքները: Երկրորդ քայլով պատահական ընտրությամբ ընտրվել են ընտրանքային հիմնական միավորները՝ ՏՏ-ները: Արդյունքում՝ 2014թ. -ին հետազոտվել է 7 680 ՏՏ՝ 5 160 քաղաքային և 2 520՝ գյուղական, իսկ 2015-2017թթ.-ին՝ 7 788-ական ՏՏ, որը կազմում է գլխավոր համակցության «ՀՀ բոլոր մասնավոր ՏՏ-ների» մոտ 1%-ը: Ընդ որում, ընտրված ՏՏ-երից 4 752-ը եղել են քաղաքային, իսկ 3 036-ը՝ գյուղական բնակավայրերում:

Միաժամանակ, նույն քայլերով կատարվել է նաև պահուստային ընտրանք՝ կանխատեսելով, որ զգալի թվով դեպքերում հարցաթերթ չի լրացվի՝ հետազոտությանը մասնակցելուց ՏՏ հրաժարվելու, երկրից բացակայելու կամ այլ պատճառներով: Արդյունքում՝ հետազոտությանը չմասնակցած ՏՏ-ները փոխարինվել են պահուստային ընտրանքից:

Կիրառվել է ամսական պարբերականությամբ ռոտացիայի սկզբունքը, այսինքն տարվա ընթացքում ընտրված տնային տնտեսություններում հարցախույզ իրականացվում է միայն մեկ անգամ:

Տվյալների որակը և ներկայացուցչականությունը

Ընտրանքի **տարեկան** չափն ամփոփ ցուցանիշների մասով (օրինակ, ընդամենը գործազրկություն, զբաղվածություն և այլն) ՀՀ կտրվածքով ապահովել է բարձր, իսկ մարզերի մակարդակով՝ բավարար ներկայացուցչականություն:

Որոշ դեպքերում տվյալներն ունեն ցածր կամ ոչ բավարար ներկայացուցչականություն կամ կիրառելիության որոշակի սահմանափակումներ, ինչը հարկ է նկատի ունենալ տվյալների վերլուծության ժամանակ: Այդպիսիք են, օրինակ.

- Ընտրանքի սահմանափակ չափի պատճառով համեմատաբար քիչ տարածում ունեցող երևույթներն օբյեկտիվորեն ունեն ընտրանքում ընդգրկվելու փոքր հավանականություն: Այդ իսկ պատճառով մանրամասնեցման (դեգագրեզացման) բարձր աստիճան ունեցող տվյալները (օրինակ՝ միաժամանակ մի քանի փոփոխականների խաչաձևումը) կարող են ունենալ սահմանափակ կամ ոչ բավարար ներկայացուցչականություն: Նմանապես՝ հետազոտության եռամսյակային տվյալները ընտրանքային փոքր համակցության պատճառով (տարեկան ընտրանքի մեկ քառորդը) ներկայացուցչական են միայն ցուցանիշների խոշոր խմբավորմամբ:

- Հարկ է նկատի ունենալ, որ **1.2 հազարից փոքր արժեք ունեցող տվյալներն ունեն արժանահավատության որոշակի սահմանափակում** (ընտրանքային մեծ շեղում), ինչը հարկ է նկատի ունենալ տվյալն օգտագործելիս:

- Ընտրանքի կիրառվող մեթոդը լիարժեք հնարավորություն չի ընձեռում ապահովել տնտեսական գործունեության կամ զբաղմունքի բոլոր տեսակների համարժեք ընդգրկվածություն, քանի որ ընտրանքը ստրատիֆիկացված չէ ըստ վերոնշյալ փոփոխականների:

Բնակչության տնտեսական ակտիվության կարգավիճակը բնութագրող ցուցանիշները հիմնված են ստանդարտացված հարցաթերթի հարցերին **հարցվողների** (ռեսպոնդենտների) պատասխանների՝ անձնական (սուբյեկտիվ) գնահատականների վրա: Որոշ դեպքերում հարցերի պատասխանները ստացվել են ոչ թե անմիջապես հարցվողից, այլ անուղղակի՝ ընտրված ՏՏ այլ չափահաս անդամից՝ հետազոտության պահին հարցվողի մասնակցության անհնարիության պատճառով (օրինակ՝ բացակայության): Արդյունքում ստացված տվյալներն առանձին դեպքերում կարող են տարբերվել իրականությունից:

Survey objective

The Labour Force Survey (LFS) is a statistical study of the households selected by the appropriate method. Through the survey information is collected from people living in households. It is widely accepted that LFS is the best source for labour market key statistics. Survey is based on standard methodology and procedures used internationally.

The objective of the survey is to provide information on not only well-known employment and unemployment but also to provide comprehensive information on other standard indicators characterizing the country labour market.

Scope of survey

- **Primary sampling unit** is a private household. The residents of the retirement homes, prisons and other institutional households were not surveyed.

- **Surveyed unit** is a person aged **15-75** (including), who a) usually lives in the household, b) is absent from household up to 3 months (within the country or abroad), c) is in the army (mandatory).

- **Observation period** is all months of the year.

- **Reference period** is the last **one week** preceding the survey, from Monday to Sunday (including).

The survey was conducted in the rural and urban settlements of all marzes (provinces) of the country.

The methodological basis of the survey

The design of the questionnaire, used concepts, set of indicators and calculation methodology, sampling method comply with the definitions and concepts recommended by the ILO and Eurostat, taking into account national context.

For the possible inclusion of phenomena studied by the survey, the **working age** has been defined **15-75** (including) age range.

According to the survey methodology:

- Each respondent was classified into the following mutually exclusive groups by status of economic activity: **employed, unemployed** and **population not economically active (inactive)**.

- Data describe the **current** economic status of respondents for the short reference period (one week).

Brief methodology of sample

A two stage stratified sample by marzes has been designed to conduct the survey. The method of systematic probability sampling was used to frame the sample. Yerevan and all marzes with rural and urban settlements were covered by sample population with proportion of all HH available in these strata.

Based on the administrative-territorial division of RA at the first stage of sampling the preliminary sampling units (PSUs) were selected, which are enumeration areas (EAs). 2001 Armenian Population Census results were used to calculate the mentioned proportions for 2014 LFS and 2011 Census results in LFS for 2015-2017.

At the second stage of sampling, HHs, which are the primary sampling units, were selected randomly. As a result, during the 2014 year 7 680 HHs have been surveyed, of which 5 160 urban and 2 520 rural areas. Since 2015 the annual sample size has comprised 7 788 HHs, around 1% sample of the total population (all private HHs in RA). From the sampled HHs 4 752 were in urban and 3 036 in rural areas.

At the same time, the same steps selected a reserve sample, because it was anticipated that in most cases the questionnaire might not be completed because of the household's refusal to participate in the survey, absence from the republic or other reasons. As a result, the HHs, which have not been interviewed, were replaced from the reserve sample.

The selection of households (HH) has been done monthly by the rotation principle. Sampled households are interviewed only once a year.

Data quality and representativeness

The **annual** size of the sample in terms of aggregated indicators (e.g. unemployment, employment, etc.) provides high representativeness on country level, and provides minimum representativeness on marz (province) level.

In some cases the data have low validity or insufficient representativeness, hence, some limits for use, which should be taken into account while analyzing the data. These can be:

- Relatively less popular phenomena objectively have less chance to be included in the sample because of its limited size. Therefore data at a high level of disaggregation (e.g. the simultaneous crossing of several variables) may have limited or insufficient representativeness. Similarly, the quarterly survey data (annual sample per quarter) are representataive only by large grouping of indicators because of the small sample size.


- **Important! Values less than 1.2 ths. has certain limitations of reliability** (large sampling error) and must be used with care.

- The sampling method doesn't give full opportunity to provide adequate coverage for all the types of economic activity or occupation, since the sample is not stratified according to these variables.

- The indicators describing the popoulation's economic activity status are based on a **respondents'** answers, personal (subjective) assessment of standardized questionnaire.

In some cases the answers have been obtained not directly from the target respondent because of the impossibility of his/her participation at the time of the survey (e.g. respondent isn't available). The responses provided proxy from the another adult member of the sampled household. As a result, the received data in some cases can differ from the reality.

Աշխատուժի հետազոտության հիմնական հիմնադրությամբ շրջանակը¹
The Basic Conceptual Framework of the Labour Force Survey¹



¹ Մեթոդաբանական հիմքը՝ Աշխատանքի վիճակագիրների 13-րդ համաժողովի բանաձևեր Աշխատուժի, զբաղվածության, գործազրկության և թերզբաղվածության վիճակագրության մասին, 1982:
Methodological basis is 13th International Conference of Labour Statistician: Resolutions on Statistics of Labour Force, Employment, Unemployment and Underemployment, 1982.